

Շայերենի այբուբենի մերօրյա խնդիրներ

ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Ս. Գ. Արրահամյան
(ՊԲՀ 1998, Համար 3)

Տարիներ շարունակ մեզանում բուռն բանավեճ է գնում հայերենի այբուբենի և ուղղագրության վերաբերյալ: Բանավեճը դեռ շարունակվում է, բայց նրա ընթացքն ակնհայտ դարձրեց, որ գիտության, կրթության, մշակույթի աշխատողները, առհասարակ մտավորականությունը հիմնականում պաշտպանում է Հայաստանի Հանրապետությունում փաստական պետական լեզվի դեր կատարող արեւելահայերենի այժմ գործող այբուբենն ու ուղղագրությունը: Դա են հաստատում Գիտությունների Ազգային Ակադեմիայում, Երեւանի պետական համալսարանում, Մատենադարանում, մանկավարժական ինստիտուտներում կազակերպված քննարկումները, տարբեր բնագավառների գործիչների հրապարակումները, հարցազրույցները, ելույթները: Ինչ վերաբերում է ուսուցիչներին, ապա նրանք գործող ուղղագրությունը պաշտպանում են հատուկ կրքոտությամբ՝ ելնելով հատկապես սովորողների, դպրոցի շահերից:

Թվում է՝ գործող ուղղագրությունը մերժողները, ազգային, քաղաքական գրավիչ, տպավորիչ կարգախոսների շահարկումով որևէ արդյունքի չհասնելով, պիտի որ հաշտվեին հարցի գիտական լուծման իրական վիճակի հետ եւ հրաժարվեին գիտական որևէ արդարացում չունեցող իրենց պայքարից եւ մանավանդ պայքարի եղանակից: Սակայն կատարվում է ճիշտ հակառակը: Հույս չունենալով շահարկումներով հաջողության հասնելու վրա՝ փորձում են բացահայտորեն շրջանցել գիտությունն ու գիտականը եւ ազգային լեզվի այդ կարեւորագույն հարցը լուծել վարչարարությամբ: Այդ նպատակով նույնիսկ ՀՀ Ազգային ժողով է ներկայացվել օրենքի նախագիծ (հեղինակ՝ Ազգային ժողովի պատգամավոր Կարապետ Ռուբինյան), որին եւ պաշտոնական ընթացք է տրված:

Բանավեճի այս փուլի նորություններից է եւ այն, որ այբուբենի հարցն առանձնացվում է ուղղագրությունից, ներկայացվում է առանձին, թեև չի հանվում քննարկումից, և այբուբենի խնդրի քննարկման նպատակներից մեկն էլ ուղղագրության հարցի լուծմանը նպաստելն է: Այսպես թե այնպես օրենքի հիշյալ նախագիծում ներկայացված է մասնավորապես այբուբենի հարցը՝ թե՛ ինքնին վերցրած և թե՛ կապված տեղեկատվական տեխնոլոգիաներում գրանշանների օգտագործման հետ: Որ տեղեկատվական տեխնոլոգիաներում գրանշանների հարցը լուծում է պահանջում, ինքնին հասկանալի է, բայց որ տվյալ ձևը, որով հակառակ մասնագետների կարծիքի և շրջանցելով այն, պատգամավորը ձգտում է, որ վարչական եղանակով իր նախագիծն տրվի օրենքի ուժ եւ հանձնարարվի կիրառության, մեղմ ասած, անհասկանալի է և անհանդուրժելի: Ազգային ժողովի ղեկավարությունը պատգամավորի նախագիծը պաշտոնական շրջանառության մեջ է դրել, և այն ուղարկվել է նաեւ մասնագիտական կարծիքի: Նախագծի վերաբերյալ մերժողական

կարծիք են հայտնել ՀՀ կառավարությանն առընթեր լեզվի պետական տեսչությունը: Գիտությունների Ազգային Ակադեմիան և նրա Լեզվի ինստիտուտը, Երևանի պետական համալսարանը և այլն: Ազգային ժողովի կրթության, գիտության, մշակույթի երիտասարդության հանձնաժողովի ընդլայնված նիստում քննարկվեց հիշյալ նախագիծը (1998 թ. հուլիսին), և ոչ ոք չպաշտպանեց այն, բացի նախագծի հեղինակից:

Գործող այբուբենի քննադատները պայքարի մեջ մարտավարական այլ նոր քայլեր են ձեռնարկում: Օրինակ, կոչ են անում դիմել սփյուռքին՝ սատար կանգնելու Հայաստանի Հանրապետությունում գործող այբուբենի և ուղղագրության դեմ իրենց պայքարին, մայր հայրենիքում գործող այբուբենն ու ուղղագրությունը վերանայելու, նրանում նորը մերժելու նպատակով: Շատ տարօրինակ քայլ է: Նախ՝ ըստ երևույթին, ոմանք սփյուռք ասելով հասկանում են միայն արևմտահայությունը: Բայց չէ՞ որ այսօրվա սփյուռք ունի արևելահայության մի սովոր զանգված (ավելի քան երեք միլիոնանոց), որը ժամանակին ընդունել է եւ բնավ չի ուզում մերժել գործող այբուբենն ու ուղղագրությունը: Երկրորդ եւ ամենակարեւորը. որքանով է բարոյական՝ ստեղծել այնպիսի կարծիք ու տպավորություն, թե մայր հայրենիքում գիտական, մտավոր ներուժն այնքան անճարակ է, որ ի վիճակի չէ տնօրինել ու լուծել հայերենի ուղղագրության հետ կապված հարցերը, և այդ պատճառով իրենք դիմում են սփյուռքի միջամտությանն ու ուժերին: Հազիվ թե մեր ժողովրդի երկու հատվածներում գտնվեն մարդիկ, որ անկեղծորեն հավատան, թե այսպիսի խառնակչությամբ կարելի է հասնել ազգային որևէ, այդ թվում և ուղղագրական միասնության: Այս մասին ավելի մանրամասն՝ ստորև:

Ինչպէս հայտնի է, բանավեճի առարկա են այբուբենի ընդամենը երեք գրանշան՝ *ու*, *ւ* (*վյուն*), *և*: Գործող այբուբենի քննադատներն առաջարկում են այբուբենից եւ առհասարակ գործածությունից հանել *ու* տառը, որն իրենք համարում են ոչ թե տառ, այլ *ո* և *ւ* տառերի զուգակցություն, այբուբենում վերականգնել *ւ*-ը: Առաջարկում են նաև *և* -ը առհասարակ հանել գործածությունից և նրա ներկայացրած հնչյունակապակցությունն արտահայտել *և* տառերի զուգակցությամբ: Երեքն էլ անընդունելի առաջարկություններ են:

ա) *Ո՛ւ* տառը այբուբենում լեզվի հնչյունական համակարգի պատմական զարգացման օրինաչափ արդյունք է, այն սկզբնապես է եղել տառերի զուգորդում, իսկ արդի հայերենում ինքնուրույն տառ է, հայերենի *ու* պարզ ձայնավորի տառային արտահայտություն:

բ) *Ի* (*վյուն*) գիրը շատ դարեր առաջ դադարել է ինքնուրույն տարի արժեք ունենալուց՝ նրա արտահայտած հնչյունը լեզվից պատմականորեն վերացած լինելու պատճառով, ուստի չի կարող վերականգնել և տեղ գտնել արդի հայերենի այբուբենում:

գ) Համագիր *և*-ը անհրաժեշտ է հանել այբուբենից, քանի որ այն որևէ հնչույթ նշող գրանշան չէ, ուրեմն և տառ չէ. սկզբնապես այբուբենի մեջ գործածվել է որպես շաղկապ՝ Մաշտոցի ստեղծած 36 տառերին հետագայում ավելացված *օ*, *ժ* տառերը շաղկապելու նպատակով և այդպես էլ գործածվել է այբուբենի մեջ ու հետագայում անհիմն կերպով համարվել տառ:

Համագիր Լ-ը, հանվելով այբուբենից, ներկայացվում է նրանից դուրս՝ որպես գրանշան՝ առանձին հանդես եկող Լ փոքրատառ շաղկապը ու համապատասխան տառակապակցությունները այլ դեպքերում գրելու համար: Տողադարձի և այլ անհրաժեշտ դեպքերում Լ-ը ներկայացվում է իր բաղադրիչներով՝ *Ե Վ* (ոչ թե ե): Բառարաններում, տարբեր բառացանկերում Լ ունեցող բառերի այբբենական տեղը այբուբենի մեջ որոշում է հիմք ընդունելով նրա բաղադրիչներ *ե/վ*-ի տեղը այբուբենում, որպիսի մոտեցումով կկանխվեն այնպիսի հակասություններ, որպիսիք շատ են մեր բառարաններում:

Ավելացնենք, որ ինչպես կարելի է հեշտությամբ նկատել, այս երեք գրանշանների սույն լուծումները լիովին համապատասխանում են տառի, այբուբենի մեսրոպյան ըմբռնման ու գնահատմանը: Այս գրանշանների հետ կապված հարցում (ինչպես եւ այլ հարցերում) ոմանք մեր այսօրվա կենդանի լեզվի կառուցվածքին, օրինաչափություններին, դրանց կանոնարկմանը նայում են ոչ թե լեզվի զարգացման ներկա շրջանի տեսանկյունով, այլ արհամարհելով կենդանի լեզվի պատմական զարգացման իրական պատկերի եւ այդ պատկերին համապատասխան փոփոխությունները, որոնք տասնամյակներ առաջ կատարվել են հայերենի այբուբենում և ուղղագրության մեջ, ճիշտ է, լեզվի պատմական զարգացման կարող է փոխվել հնչյունի և գրի լիակատար համապատասխանությունը, սկզբունք, որով զնկավարվել է Մաշտոցը մեր այբուբենն ստեղծելիս, բայց այդ անհամապատասխանությունը չպետք է հասցնել ծայրահեղության լեզվի գրավոր ու բանավոր տարբերակների, հնչյունական համակարգի եւ այբուբենի միջեւ: Հատկապես 1940 թ. այբուբենի բարեփոխության շնորհիվ զգալիորեն վերականգնվեց ավանդական ուղղագրությունը է և օ տառերի վերականգնման շնորհիվ: Նշենք նաև, որ արդի հայերենի բաղաձայնական համակարգում ձայնեղ բաղաձայնները, որոնք խուլի են վերածվել պատմականորեն, գրվում են գրաբարյան սկզբունքով՝ որպես ձայնեղ: Մասնավորեապես խոսելով այբուբենի մասին՝ չի կարելի աչք փակել այն սկնհայտ իրողության վրա, որ մեր այբուբենն այսօր էլ մաշտոցյան է. Մաշտոցի ստեղծած 36 տառերից արդի այբուբենում չկա միայն մէկը՝ *ւ*-ն (վյունը): Միջին դարերում դրան ավելանում են *օ*, *Ֆ* տառերը, Հայերենի արդի այբուբենի մաշտուցյան լինելը հաստատվում է թե՛ նրանով, որ մեր այսօրվա այբուբենը հիմնականում Մեսրոպ Մաշտոցի ստեղծածն է և թե՛ նրանով, որ փոփոխությունները խիստ մասնակի բնույթ ունեն եւ դրանք էլ արվել են տառի մեսրոպյան սկզբունքին լիովին համապատասխան: Ավելացնենք նաեւ, որ արդի հայերենի ուղղագրության երեք սկզբունքներից երկուսը՝ ավանդականը և ստուգաբանականը, նպատակ ունեն առավել չափով պահպանել ավանդականը արդի ուղղագրության համակարգում: Այսպիսի փաստերի առկայության պայմաններում միանգամայն տարօրինակ է, թե ինչպե՛ս են ոմանք փորձում համոզել մարդկանց, թե «սովետական այբուբենը», «սովետական» ուղղագրությունը մեզ կտրել են մեր արմատներից: Մեր այբուբենի ներկա վիճակի բնութագրումից անմիջապես հետո նշենք, որ առհասարակ անհեթեթ է հնչում «սովետական այբուբեն» որակումը: Այնպիսի որակումները միայն մեկ նպատակ ունեն՝ վարկաբեկել նորը, որով եւ

«հիմնավորել» նրանից հրաժարվելու առաջարկը: Իսկ եղած նորից հրաժարվել՝ նշանակում է լրիվ կտրվել ներկայից եւ երկու ուղղով կանգնել անցյալում: Սա կմեծացնի խզումը ներկայի և անցյալի միջև, մեր այբուբենն ու ուղղագրությունը կդարձնի դժվարամատչելի, արհեստականություն կմտցնի լեզվի գրավոր տարբերակի մեջ և այն արհեստականորեն կհակադրի բանավոր լեզվին: Իսկ սրանք հակասում են թե՛ լեզվի թե՛ ժողովրդի շահերին:

Իրենց դիրքորոշումն արդարացնելու համար այսօրվա այբուբենն ու ուղղագրությունը մերժողները դրանք անվանում են «սովետական» եւ «փաստարկները» բերում են ոչ այնքան 1940 թ., որքան 1922 թ. բարեփոխություններից, որոնք, իրոք, ծայրահեղություններ են պարունակել, բայց որոնք վերացվել են 1940 թ.: Խորհրդային տասնամյակներին հայերենի այբուբենի եւ ուղղագրության մեջ կատարված փոփոխություններն այնպես են ներկայացվում, որ պատմությանն անձանօթ ընթերցողը կկարծի, թե 1940-ին շարունակվել է 1922-ի քաղաքականությունը: Իրականում եղել է ճիշտ հակառակը. 1940 թ. բարեփոխությամբ մերժվել են 1922 թ. ուղղագրական ծայրահեղությունները, և դրա հետեւանքով էլ արդի այբուբենն ավելի մօտ է ավանդականին, քան թե 1922 թ. հաստատված այբուբենին:

1922-1940 թթ. մի միջանկյալ շրջան կարելի է համարել ավանդական և արդի ուղղագրության միջև, որի ընթացքում մերժվել էր ավանդականության սկզբունքը, և որպես հիմնական սկզբունք ընդունվել հնչյունականը: Ուշագրավ է այն փաստը, որ 1922 թ. ուղղագրության փոփոխության մեջ կատարված վարչարարության մասին ավելի շատ խոսում են նրանք, ովքեր այսօր ջանք չեն խնայում արդի հարցերը վարչարարությամբ լուծելու համար: Չպետք է մոռանալ, որ եթե ժողովրդավարությունն ու արհեստավարժությունը մեր կյանքի ու գործունեության բոլոր բնագավառներում են անհրաժեշտ, ապա լեզուն, որն ամենաժողովրդական երևույթն է, համընդհանուր է ամբողջ ժողովրդի համար առավելագույն չափով է կարիք զգում ժողովրդական ու արհեստավարժական մոտեցման: Սրան ավելանմում է այն հանգամանքը, որ լեզուն իր իսկ բնույթով է այդպիսին. նա չի սիրում կամայականություն, արհեստականություն, ունի իր առարկայական օրինաչափությունները, և դրանց համապատասխան էլ պետք է լինի մեր վերաբերմունքը նրա նկատմամբ: 1988 թ. պետք է հիշել ոչ միայն քննադատելու համար, այլև դասեր առնելու, վարչարարական մեթոդներով լեզվի վրա ներգործելուց հրաժարվելու համար:

Անցնենք *Լ*-ի հարցին: Այս գրանշանն այբուբենում որպես տառ ներկայացնելը (1940 թ.) ըստ էության անհիմն քայլ է եղել: Հիշենք, որ այբուբենում այն սկզբնապես գործածվել է որպես Մաշտոցի ստեղծած 36 տառերին հետագայում ավելացված *օ*, *Ֆ* տառերը շաղկապելու բառական միաջոց, եւ 1940 թ. գնահատվել է որպես տառ, այբուբենում գրավելով 37-րդ տեղը, ապա նաև գործածվել է բառամիջում համապատասխան հնչյունականապակցությունն արտահայտելու համար: Այսպիսով՝ այբուբենի մեջ մտած *Լ* -ը իր մեջ ամփոփում է համապատասխան շաղկապի բաղադրիչ, հնչյունները, որոնք այբուբենում ունեն իրենց տառերը: Եվ սա հանգեցրել է այն բանին, որ այս հնչյունները, բացի իրենց տառերից, ունեն նաև մեկ ուրիշ այսպես ասած, միացյալ արժեքով «տառ»՝ համագիր *Լ*:

Այս սկզբունքային հակասությանն ավելանալով այն իրողությունը, որ *Լ-ը* չունի մեծատառ, կրկնակի է դարձնում հակասությունները: Հակասությունը հիմնականում հետեւանք է այն բանի, որ *Լ-ի* համարժեք մեծատառով գրությունը (ԵՎ) տրոհվում է իր բաղադրիչ հնչյուն-տառերի, որոնք թե՛ քանակով թե՛ այբուբենի մեջ գրաված դիրքով չեն համապատասխանում փոքրատառ *Լ-ին*: Այս անհամպատասխանությունն ու հակասությունը հանդես են գալիս հատկապես այն դեպքերում, երբ գործ ունենք նույն բառի փոքրատառ և մեծատառ գտրության հետ (բառարաններ, վերագրեր եւ այլն):

Այսպես՝ դպրոցական ուղղագրական բառարանում եւ ունեցող բառերը այբբենական հերթականությունը որոշված է ըստ այբուբենում *Լ-ին* հատկացված տեղի՝ 37-րդ տառ: Ժամանակակից հայոց լեզվի քառահատոր բացատրական բառարանում, որտեղ գլխաբառերը գրված են գլխատառերով, բառի այբբենական տեղը, հասկանալի է, որոշվում է ըստ բաղադրիչ տառերի այբբենական դիրքի: Ինչպես տեսնում ենք, փոքրատառ *Լ* գիրը ինքնուրույն տառ համարելը այբուբենում տեղ տալը պատճառ է դառնում տարբեր անհարմարությունների ու հակասությունների:

Եզրակացությունը մեկը կարող է լինել, *Լ-ը* տառ համարելը և այբուբենում զետեղելը հակասում է տառի գիտական ըմբռնմանը և գործնականում պատճառ է դառնում հակասությունների: Քանի որ *Լ-ը* տառ չէ, ուստի այն պետք է հանել այբուբենից:

Սխալ է նաև ոմանք այն պնդումը, թե *Լ-ը* համարում է «սովետական այբուբենի» «սովետահայ տառ», որի փոխարեն նա առաջարկում է գրել ամենուրեք «ե»: Նախ՝ *Լ* համագիրը ստեղծվել ու լայնորեն գործածվել է սկսած միջին դարերից: Մխիթարյան միաբանների ստեղծած հանրահռչակ ու հսկայածավալ հայկազյան բառարանում *Լ-ը* արժանացել է համատարած գործածության: Այս համագրի շաղկապը իր օրինակ տեղն է գտել նախախորհրդային շրջանի դասագտրքերում: Պետք է պահպանվի և շաղկապի վաղուց ավանդական դարձած այդ գրությունը նաեւ այն պատճառով, որ նրա շնորհիվ կատարվում է ժամանակի, տեղի, աշխատանքի զգալի խնայողություն:

Ըստ ՀՀ Գիտությունների Ազգային Ակադեմիայում ստեղծված հաճախականության բառարանի (հեղինակ՝ Բ. Ղազարյան) տվյալների՝ եւ շաղկապը հայերենի ամենահաճախակի գործածվող բառն է: Շուրջ միլիոն ընտրանք ունեցող բառագործածության մեջ եւ շաղկապը գործածվում է 54.254 անգամ: Այժմ ոմանք (Կ. Ռուբինյան եւ ուրիշներ) առաջարկում են առհասարակ գործածությունից հանել այդ գրանշանը՝ այն փոխարինել և տառակապակցությունով: Այս առաջարկությունն անընդունել է հետեւեալ պատճառներով: Նախ՝ եթե լեզվական որևէ իրականության հետ կապված չլուծված հարցեր կան, ապա դրանք պետք է լուծել եւ ոչ թե լեզվական տվյալ իրականությունը վերացնել: Իրոք, *Լ-ը* տառ չէ, ուրեմն պետք է ճշտել *Լ-ի* տեղը գրանշանների շարքում և ոչ թե *Լ-ը* հանել գործածությունից ընդհանրապես: Երկրորդ՝ գրավոր խոսքում խնայողության սկզբունքը երբեք էլ ավելորդ չի եղել, այժմ առավել ևս ավելորդ չէ, մանավանդ երբ կա դրա հնարավորությունը և իրեն արդարացրած դարավոր փորձառության փաստը: Ըստ որում՝ խոսքը վերաբերում է զգալի խնայողությանը: Համագիր *Լ-ը*

գործանությունից հանելու դեպքում շուրջ երկու միլիոն ընտրանքում փոխանակ գրելու 54,254 *եւ* գրանշան, պետք է ստիպված դրա կրկնակի չափով ավել՝ ավելի քան 108.500 գրանշան (եւ): Ո՞ւմ է պետք այսպիսի նորարարությունը: Ամեն մի տեսական հարց լուծելիս պետք է մտածել նրա գործնական հետեւանքների մասին: Եւ երրորդ հանգամանքը. սխալ է *Լ-ի* համարժեք համարել *եւ-ը* արդի հայերենում *եւ* տառակապակցություն չկա, քանի որ *ւ* տառ չկա:

Համագիր Լ-ի քննարկումից հանգում ենք հետեւյալին.

ա) *Լ-ը* հանվում է այբուբենից, ներկայացվում նրանից դուրս, գործածվում որպես համագիր գրանշան՝ առանձին հանդես եկող փոքրատառ շաղկապը եւ համապատասխան տառակապակցությունը այլ դեպքում գրելու համար (բացի այն դեպքերից, երբ *եվ* տառերը բաղադրյալ բառի տարբեր բաղադրիչների միավորներ են, ինչպես՝ *հոգեվիճակ, տարեվերջ*):

բ) Տողադարձի և այլ անհրաժեշտ դեպքում *Լ-ը* ներկայացվում է իր բաղադրիչներով՝ *եվ* և ոչ թե *եւ*:

գ) Բառարաններում, տարբեր բառացանկերում *և* ունեցող բառերի այբուբենական տեղը որոշելիս հիմք է ընդունվում նրա բաղադրիչներ *եվ-ի* տեղը այբուբենի մեջ, որպիսի մոտեցումով կկանխվեն այնպիսի հակասությունները, որպիսիք տեղ են գտել մեր բառարաններում մինչև այժմ:

Ավելորդ չեմ համարում նշել, որ *Լ-ը* այբուբենի մեջ զետեղելը ինքնին իրավունք է տալիս *և* ունեցող բառերը բառարաններում, բառացանկերում զետեղել ըստ այբուբենում *Լ-ի* գրված դիրքի: Այնպես որ, այբուբենից հանվելով, վերացվում է այդպիսի հնարավորությունը, որով կվերանա հակասությունը նրա գործածություններում:

Ինչպես տեսնում ենք, մեր այբուբենի եւ ուղղագրության քննադատությունը, նրանում նորի մերժում ու ավանդականի վերականգնումը զուրկ են գիտական հիմքից: Դրանք հակասում են հայերենի պատմական զարգացման ընթացքին, վերջինիս իրական արդյունքին եւ այբուբենի, տառի մետրոպոլիտան ըմբռնմանը:

Հայերենի այբուբենի եւ առհասարակ գրանշանների հարցի հստակեցումն անհրաժեշտ է ոչ միայն ինքնին վերցրած, այլև համակարգչային տեխնիկայի, տեղեկատվական տեխնոլոգիաների ճշգրիտ գրանշանային համակարգ մշակելու նպատակով:

Տեղեկատվական տեխնոլոգիական հայերենի գրանշանների (այդ թվում *Լ*, բնականաբար, այբուբենի) համակարգի մշակումը անհետաձգելի խնդիր է: Այդ գծով հայերենի՝ բարձրագույն խորհուրդ ներկայացված նախագծերի քննարկումները չհանգեցրին դրական արդյունքի՝ նախագծերում կիրառված սխալ սկզբունքների պատճառով: Տեղեկատվական տեխնոլոգիաներում գրանշանների համակարգի լուծման հիմքում պետք է ընկած լինի հետևալ սկզբունքային, ելակետային հարցերում ճիշտ կողմնորոշումը՝ ա) հայերենի այբուբենի պատմական զարգացման տարբեր փուլերի փոխհարաբերությունը, բ) լեզվի ու տեխնիկայի փոխհարաբերությունը (քննարկվող խնդրի տեսակետից): Այս հարցերում առարկայական կողմնորոշումը հանգեցնում է հետևյալին.

ա) հայերենի հնչյունական համակարգի եւ նրա գրանշանների (այդ թվում այբուբենի) տարբեր փուլերի համար մեկ բացարձակ միասնական համակարգ ունենալու պահանջը հակասում է լեզվի պատմական զարգացման փաստական վիճակին: Անհրաժեշտ է տեղեկատվական տեխնոլոգիաներում ունենալ հայերենի գրանշանների *համապարփակ* համակարգ ընդգրելու համար հայոց այբուբենի ոչ միայն ավանդական, այլեւ արդի փուլի բնորոշ յուրահատկություններ իրական պատկերը որպես պատմական զարգացման արդյունք, կենդանի գործուն իրողություն:

բ) Լեզվի եւ տեխնիկայի փոխհարաբերության հարցում տեխնիկան պետք է հարմարեցնել կենդանի լեզվի համակարգին և ոչ թե հակառակը, մանավանդ որ տեխնիկան այդ հնարավորությունը տալիս է:

գ) Նախորդ կետի տրամաբանական պահանջի խախտումով կտուժի ոչ միայն լեզուն, նրա կիրառությունը, այլև տեղեկատվական տեխնոլոգիան, քանի որ այդ խախտման պատճառով չի ապահովվի տեխնիկայի մի կարևոր ցուցանիշը՝ նրա համապատասխանությունը կենդանի լեզվի իրական վիճակին, ուրեմն եւ տվյալ դեպքում տեղեկատվական տեխնոլոգիայի առջև դրված նպատակի իրացման լիարժեքությունը:

դ) Քանի որ հայերենի՝ վերը ներկայացված այբուբենը հիմնականում համընկնում է ավանդական այբուբենին, եւ ավանդական գրության կարիքները բավարարելու համար նրանում պակասում է «ւ» (վյուն) գիրը, ուստի ավանդական գրության դեպքում, ուրեմն եւ տեղեկատվական տեխնոլոգիաներում պետք է ներկայացնել նաեւ «ւ» (վյուն) գրանշանը, որը կգործածվի երկրորդ Ֆոնտում կամ նրա կիրառության ավանդական դերը կարգավորող ծրագրով:

Կա հայերենի այբուբենին եւ ուղղագրությանը վերաբերող մի խնդիր ևս, որը թեև ուղղակիորեն առնչվում է վերը քննված հարցերի հետ, այնուամենայնիվ պահանջում է առանձնակի վերաբերմունք, մանավանդ որ այն տեղ է գտել լեզվի մասին օրենքի մեջ եւ հանդիսանում է ՀՀ լեզվաքաղաքականության պահանջ: Խոսքը վերաբերում է հայերենի ուղղագրության (ինքնին հասկանալի է՝ նաև այբուբենի) միասնականացման խնդրին: Այն հանգամանքը, որ այս հարցը շատ է շահարկվում, բնավ չի նշանակում, թե այն հանվում է օրակարգից: Պարզապես հարցի լրջությունը և նրա շահարկումը, ըստ որում ծայրահեղորեն քաղաքականացնելը և քաղաքական-վարչական լուծում պահանջելն իրար բացառում են: Կասկած լինել չի կարող, որ որևէ ժողովրդի լեզվի համար միասնական ուղղագրությունը ցանկալի է: Դա, բնականաբար, վերաբերում է նաև մեր լեզվի արևմտահայ եւ արևելահայ ճյուղերի ուղղագրությանը և այբուբենին:

Խնդիրն այն է, թե ով ինչպես է հասկանում այդ միասնականացումը և ով ի՞նչ ուղի և միջոց է առաջարկում: Ցավալի է, որ հարցի լուծման եղանակի միջոցի ծայրահեղ քաղաքականացումը առաջին պլան է մղում շահարկումը և այդպիսով խանգարում մեր ընդհանուր գործին: Ուստի մենք ստիպված ենք հանուն հարցի լուծման ուղու հստակեցման գոնե համառոտակի անդրադառնալ որոշ շահարկումների՝ հույս փայփայելով, որ դրանք կբացառվեն հետագայում:

Ոմանք ուղղագրության (այլև այբուբենի) միասնականացման և Հայաստանում գործող այբուբենի եւ ուղղագրության վերանայման հարցերը նույնացնում են, այլ կերպ՝ քննվող հարցի լուծումը տեսնում են մեզանում ավանդական ուղղագրությունը վերականգնելու մեջ: Ըստ երեւոյթին, խորհրդային կարգերի նկատմամբ ունեցած աստելությունը ոմանց հասցնում է այնտեղ, որ ժխտում են ոչ միայն այդ կարգերին հատուկ քաղաքականն ու գաղափարականը, այլև այն ամենը, այն արժեքները, որոնք ժողովուրդն աստելծել է խորհրդային տասնամյակների ընթացքում: Եթե անցյալի մերժումների ծայրահեղությունները կարելի է այսպես թե այնպես բացատրել, հասկանալ բուն անցման շրջանի առաջին փուլում, երբ գործում էր «կորչիի» եւ «կեցցեի» կարգախոսը, ապա տարիներ անց, մանավանդ այդ գաղափարական կարգախոսների բերած աղետները «նաշակելուց» հետո նորից շարունակել այդ նույն ձեւով, ավելի քան անլրջություն է:

Բազմաթիվ անգամ են նույն մարդիկ շեշտել, թե ուղղագրությունը ոչ թե գիտական, այլ քաղաքական հարց է, ուրեմն քաղաքական մակարդակով էլ պետք է լուծվի: Այստեղ շփոթում են նույն երեւոյթի տարբեր կողմերը: Գիտական եւ ոչ միայն գիտական տարբեր հարցեր ազգի, պետականության համար այս կամ այն փուլում կարող են իրենց հատուկ կարեւորությամբ, ձեռք բերել քաղաքական նշանակություն: Հենց այդպիսին է այբուբենի հարցը Վոսմշապուռի արքայի շրջանում: Բայց սա բնավ չի նշանակում, թե այդ հարցերը, տվյալ դեպքում այբուբենի հարցը դադարում են գիտական լինելուց: Ո՛չ և ոչ: Ժիշտ հակառակը: Որպեսզի գիտական հարցի լուծումը քաղաքական առումով իրեն արդարացնի, անհրաժեշտ է հատուկ ուշադրություն դարձնել նրա լիարժեք գիտական լուծմանը: Այբուբենի հարցի գիտական, մասնագիտական կարեւորության գիտակցումն է, որ Վոսմշապուռի Սահակ Պարթևի հետ միասին, ընտրեց հենց Մեսրոպ Մաշտոցի՛ն, հանձնարարեց հենց նրան:

Այնուհետև, չի կարելի մոռացության տալ, որ ավանդական ուղղագրության փոփոխության անհրաժեշտությունը ծագել է խորհրդային կարգերի ծննդից շատ ու շատ առաջ, եւ մեր դարի տասնական թվականներին արդեն օրակարգի հարց էր: Սակայն պատմական իրադարձությունները, և հատկապես ազգային աղետը՝ Մեծ Եղեռնը, պատճառ դարձան, որ նվազի այդ հասունացած հարցի լուծման հնչեղությունը: Այնպես որ խորհրդային շրջանում կատարված ուղղագրական փոփոխությունների ակունքը հեռավոր անցյալում է: Եթե մեկը կախարդական փայտիկով վերացներ հայերենի այբուբենի և ուղղագրության վերջին տասնամյակների փոփոխությունները և մեզ հասցներ ավանդական ուղղագրության վիճակին, ապա միևնույն է, մենք կանգնած պիտի լինեինք այբուբենի և ուղղագրության փոփոխությունների անհրաժեշտության առջև, դրանք վաղ թե ուշ պիտի կատարվեին և Հովհաննես Թումանյանը դարձյալ պիտի ասեր. «Ուղղագրությունը գիտություն է»: Եվ չի բացառվում, որ գիտական մոտեցման դեպքում հարցը միանգամից ստանար 1940 թ. լուծումը:

Կարելի է չբացատել, որ եթե Խորհրդային Միությունը, այդ թվում և Հայաստանը, երկաթե վարագույրով անջրպետված չլինեին արտասահմանից, եւ եթէ հնարավորություն լիներ սփյուռքի հետ քաղաքական ու մշակութային

կապերի ու հարաբերությունների մեջ մտնել, ապա թերևս ուղղագրության հարցում բանակցությունները հանգցնելին այն բանին, որ ուղղագրության 1940 թ. արդյունքը ամբողջությամբ կամ հիմնականում ընդունված լիներ նաև սփյուռքում, ուրեմն և ամբողջ հայության կողմից: Իսկ եթե անցյալի վերաբերյալ պատրանքները թողնենք մի կողմ եւ խոսենք այսօրվա մեր անելիքի մասին, ապա ամեն ինչ պետք է լուծվի գիտական ճանապարհով:

Եթե պատմական կտրվածքով գրական հայերենի ողջ պատմության համար բացարձակ միասնական այբուբեն և ուղղագրություն ունենալու պահանջը, ինչպես վերը, հակասում է լեզվի պատմական զարգացման փաստական արդյունքներին (հիշենք օ, Ֆ տառերի հավելումը XII դարում եւ այբուբենի մասնակի բարեփոխությունը 1940 թ.), ապա համաժամանակյա մոտեցումով հայերենի երկու ճյուղերի այբուբենի և ուղղագրության միասնականացումը ցանկալի է և հետագա լայն քննարկման կարիք է զգում:

Ունեմ մի քանի նկատառումներ.

ա) Հարցը պետք է քննել և լուծել մասնագիտական մոտեցումով և ժողովրդավարական եղանակով՝ բացառելով վարչարարությունը: Քննարկմանը պետք է մասնակից դարձնել Հայաստանի և սփյուռքի (վերջինիս թե՛ արևմտահայության, թե՛ արևելահայության) ներկայացուցիչներին:

Հատուկ քննարկման առարկա պետք է դարձնել հայերենի երկու ճյուղերի հնչյունական համակարգերի և այլ տարբերություններ, որոնք ուղղագրության միասնականացման ճանապարհին դժվարություն կհարուցեն: Նկատի ունեմ հատկապես արևելահայերենի բաղաձայնական եռաշարք համակարգի (որով այն նման է գրաբարին) եւ արեւմտահայերենի երկշարք համակարգի պայմաններում ուղղագրության միասնականացման խնդիրը եւ դրանից բխող դժվարությունների հաղթահարումը: Իրողությունը դիտելով մի փոքր այլ հարթության վրա՝ քննարկման առարկա պետք է դարձնել պատմականորեն ձեւավորված ուղղախոսական տարբեր օրինաչափությունների պայմաններում միասնական ուղղագրության հարցը:

բ) Այբուբենի և ուղղագրության միասնականացման հարցերը անհրաժեշտ է քննել լեզվի երկու ճյուղերի մերձեցման համատեքստում և ոչ թե անտեսելով ու շրջանցելով դրանք:

գ) Այբուբենի և ուղղագրության միասնականացման խնդրում գրական հայերենի որևէ ճյուղին նախապատվություն տալու հարցում պետք է ձերբազատվել հատվածական, պատվամոլական նկատառումներից եւ ելնել հայոց ազգային լեզվի հետագա զարգացման շահերից: Այլ կերպ՝ որպես չափանիշ պետք է դիտվի լեզվի գոյատևման ու զարգացման հարցում հայերենի երկու ճյուղերից յուրաքանչյուրի լեզվական և այլ տվյալներն ու հնարավորությունները:

Ավելորդ չեմ համարում նշել, որ արեւմտահայության մեջ էլ միասնականություն չկա այբուբենի եւ ուղղագրության հարցում. ոչ բոլորն են պաշտպանում ավանդական ուղղագրությունը: Այս կապակցությամբ մի փոքր հղում եմ ուզում անել սիրիահայ հայտնի գիտնական, հասարակական գործիչ, հայերենի ուղղագրության վերաբերյալ շատ ուսումնասիրությունների հեղինակ Ռոպեր Շեպեճյանի մի հոդվածին, որը գրել է ուղղագրության

վերաբերյալ ծավալված բուռն բանավեճերի կապակցությամբ և հրապարակել «Հայաստան» օրաթերթում (18.6.1998 թ.): Հոդվածը վերնագրված է այսպես. «Հնչական ուղղագրությունը փրկարար պիտի ըլլա սեփական գիրեն հեռացած Սփյուռքի նոր սերունդի համար», որում խտացված արտահայտված են հոդվածի հեղինակի մտորումներն ու մտահոգությունը: Մի փոքր մեջբերում. «Այստեղ ճնշող մեծամասնությունը հեռացած է մայրենիեն: Եթե պատահի որ մաս մը ցանկություն ունենա հայերեն գրել սովորելու դյուրություն պիտի ընծայել մանավանդ հնչական արեղյանական ուղղագրությունը: Ընդհակառակն, հին, բարդացած ուղղագրության պարտադրանքը զիրենք պիտի հուսալքեն անպայման»: Ահա հոդվածում արված եզրակացությունը՝ «փոխանակ Հայաստանի մեջ հին ուղղագրության անցնելու առաջարկին, անգամներ ավելի առավելություն ունինք, որ նոր ուղղագրությունը որդեգրվի որջ հայության կողմե»:

About the problems of current Armenian alphabet

Academician S. G. Abrahamian

Summary

Mr. Abrahamian continues the discussion on the orthography of armenian language, but this time in the article he discusses on the alphabet too. He suggests this matter to be discussed by the specialists of Armenian and Diaspora, the unifying alphabets and orthography or old and new writing methods should be done parallel with unifying two branches of the armenian language. In this case the specialist should avoid sectoralistic aspects and compliments, and should consider the future evolution of the national language.

بررسی مسایل امروزی خط ارمنی

آکادمیسین س. گ. آبراهامیان

چکیده مقاله

دکتر آبراهامیان بحث مربوط به شیوه نگارش ارمنی را ادامه داده به بررسی مربوط به الفبا نیز می پردازد. او پیشنهاد می کند مسئله توسط کارشناسان ارمنستان و ارمنیان خارج بررسی گردد. یکپارچه و یک شکل کردن الفبا و شیوه نگارش باید به موازات اتحاد دو شاخه غربی و شرقی ارمنی صورت گیرد. در این راه باید از تعصبات گروهی و تعارفات پرهیز نمود و باید سیر آتی پیشرفت زبان ملی مد نظر قرار گیرد.